Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-22/2

«Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար Արտաշատի մայր ջրանցքի և գլխամասային հանգույցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 4-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 7-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N: 1 Տրամադրել կամ հրապարակել Հավելված 1.1-ով առաջացած սարքավորումները և տեխնիկական-բնութագրերը

Պարզաբանում N: 1 Հրավերի 4.3 կետին համաձայն, մասնակիցը պետք է ներկայացնի նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Տվյալ տեղեկատվությունը տեղ կգտնի կնքվելիք պայմանագրի 2.1 հավելվածում:

Հարցադրում N: 2 Հստակեցնել աշխատանքի նախահաշվային գինը, քանի որ Հրավերով սահմանված է 152824000 ՀՀ դրամ, իսկ ծավալաթերթով այլ գին

Պարզաբանում N: 2 Հրավերում նշված նախահաշվային գնի մեջ ներառված չեն տեխնիկական հսկողության, հեղինակային հսկողության համար նախատեսված գումարները: Կցված ծավալաթերթում ներկայացված 295,07 հազ. դրամ գումարվ վերաբերվում է ժամանակավոր կառույցներից վերադարձվող գումարին:

Հարցադրում N: 3 Հստակեցնել աշխատանքների տեսակը, մասնավորապես՝ Հրավերով որպես աշխատանքների անվանում նշվել է այլ շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքներ, իսկ ծավալաթերթով նախատեսվել ջրանցքի, ջրհավաք ավազանի և այլնի աշխատանքներ

Պարզաբանում N: 3 Տվյալ ընթացակարգի համար գնումների միասնական անվանացանկից (CPV) վերցվել է այդ պահի դրությամբ միակ ծածկագիրը, որը չի վերաբերվում պարզապես շենքերի, շինությունների հիմնանորոգմանը: Ընթացիկ մրցույթը վերաբերվում է հիդրոտեխնիկական կառույցների հիմնանորոգման աշխատանքներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ն. Ռաթևոսյանին:

Հեռախոս՝ 041 177 611

Էլեկտրանային փոստ՝ «sevan_hr.gnum@mail.ru»:

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԲՄԱՇՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով